



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Ա. Միլասյան Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«22» 06 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 58

Ձեռնարկողը՝

<<Սևան Ակվա>> ՓԲԸ

Ք. Երևան, Ագապուրյան 27

Գործունեությունը՝

**Սևանա լճի Բերդկունք համայնքին հարող հատվածում
Սևանի իշխանի աճեցման ցանցավանդակային
տնտեսության շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ**

<< Գեղարքունիքի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ԿԵՆՏՐՈՆ՝
տնօրեն՝



Վ. Սահակյան

Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 58

<22> 06 2017թ.

«Գեղարքունիքի մարզի Սևանա լճի Բերդկունք համայնքին հարող հատվածում Սևանի իշխանի աճեցման ցանցավանդակային տնտեսության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ»

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

«Սևան Ակվա» ՓԲԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

«Գեղարքունիքի մարզ, Բերդկունք համայնք

«Գեղարքունիքի մարզի Սևանա լճի Բերդկունք համայնքին հարող հատվածում նախատեսվող Սևանի իշխանի աճեցման ցանցավանդակային տնտեսության կազմակերպումն իրականացվելու է «Կառավարության 03.04.2014թ. №13 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի» (այսուհետև Համալիր ծրագիր) շրջանակներում: Համալիր ծրագիրն ուղղված է Սևանա լճի ձկնատեսակների բնական պաշարների և խախտված էկոհամակարգի վերականգնմանը:

«Գեղարքունիքի մարզի Սևանա լճում «Սևան Ակվա» ՓԲ ընկերության կողմից ձկնաբուծության նպատակով նախատեսվող տնտեսական գործունեության իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 21 ապրիլի 2016 թվականի «Սևանա լճում էկոհամակարգերի վերականգնման նպատակով տնտեսական գործունեություն իրականացնելու մասին» N 473-Ն որոշումը:

Սևանի իշխանի աճեցման մոդելային նոր ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսության հիմնումը նպատակ ունի ընդլայնելու ձկնարտադրության ծավալները և ավելացնելու ընկերության եկամուտները՝ համապատասխանաբար մեծացնելով նաև բնապահպանական նպատակներով ներդրվող գումարի չափը: Սևանա լճում ցանցավանդակների թիվը և ձկան արտադրության ծավալները նախատեսվում է ավելացնել աստիճանաբար, միաժամանակ նպատակ ունենալով վերահսկելու հնարավոր արտանետումները և ձեռնարկել արտանետումները նվազեցնող համապատասխան միջոցառումներ: Հիմնվող տնտեսությունները պարտավորված կլինեն մանրածուխ ձեռք բերել միայն համալիր ծրագրի շրջանակներում կառուցված մանրածուխ գործարանից, ինչը կերաշխավորի Սևանի էնդեմիկ իշխանի բուծումը:

Հաշվի առնելով Սևանա լճի բացառիկ նշանակությունը՝ համալիր ծրագրի յուրաքանչյուր օղակում՝ ձկան արտադրությունից մինչև սպառում՝ ուսումնասիրվել և հաշվի է առնվել միջազգային բնապահպանական փորձը և չափանիշները: Մանրածուխ տնտեսությունում, որը

Ալբերտ ԵՇԿ Ծիբեակ



հանդիսանում է ծրագրի կարևորագույն օղակը, ներկայումս իրականացվում է կենսական ցիկլերի ամբողջական ապահովում՝ մայրական վտառի կազմավորումը, զարգացումը, սելեկցիան, ձկնկիթի ստացումը, բեղմնավորումը և ինկուբացիան, թրթուրի և մանրածկան աճեցումը և կենսունակ մանրածկան տեղափոխումը Սևանա լիճ: Տնտեսությունն այս պահին ամբողջությամբ բավարարում է լճի տարածքում հիմնված ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսությունների պահանջը, ինչպես նաև արտադրում է մանրածկան լրացուցիչ քանակություն՝ Սևանա լիճ բաց թողնելու նպատակով: Ձկնապաշարների վերականգնման նպատակով յուրաքանչյուր տարի լիճ բաց կթողնվի արտադրված մանրածկան մինչև 25%-ը:


2016թ. հուլիս ամսից «Սևան Ակվա» ՓԲ ընկերության կողմից շահագործվում է մոդելային ցանցավանդակային ձկնաբուծական տնտեսություն, որի շրջանակներում Սևանա լճում՝ Կարճաղբյուր համայնքին հարող հատվածում, տեղադրվել է մեկ տնտեսություն՝ բաղկացած 12 ցանցավանդակից՝ յուրաքանչյուրը 25մ տրամագծով և 14մ խորությամբ: Փորձնական փուլի իրականացման ընթացքում բացահայտվել են, որ կիրառված տեխնոլոգիական լուծումների պարամետրերը հիմնականում համապատասխանում են արդյունավետության չափանիշներին (մեկ տնտեսության օպտիմալ չափ, կիրառվող սարքավորումներ, արտադրողականություն, ձկան խտություն և այլն), ինչից ելնելով Համալիր ծրագրի շրջանակներում մշակվել է ցանցավանդակային տնտեսության մոդել՝ հետևյալ պարամետրերով.

- Ցանցավանդակների քանակը – մինչև 12 հատ,
- Ցանցավանդակի տրամագիծը – 25 մ,
- Ցանցի խորությունը – 14 մ,
- Ցանցավանդակային տնտեսության ընդհանուր մակերեսը – 5892 մ²,
- Ընդհանուր ծավալը – 82425 մ³
- Ձկների խտությունը 1մ³ ում – 8 կգ,
- Տարեկան արտադրողականությունը – շուրջ 685 տ:

Համալիր ծրագրի շրջանակներում 2016 թվականից սկսած իրականացվում են «Սևանա լճի հիդրոկենսաբանական, հիդրոքիմիական և էկոլոգիական ընթացիկ վիճակի գնահատման, Սևանի իշխանի ցանցավանդակային ձկնաբուծության շրջակա միջավայրի վրա ազդեցության և էկոլոգիական ռիսկի գնահատման» մեծամասշտաբ ծրագիրը: Այս աշխատանքներն իրականացվում են այդ նպատակով Հինադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից ստեղծված, տեղական մասնագիտացված կազմակերպությունների (ՀՀ ԲՆ «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն ՊՈԱԿ, ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ, ՀՀ ԳԱԱ էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոն ՊՈԱԿ) ներկայացուցիչներից կազմված անկախ, գիտական մոնիթորինգի խորհուրդի (այսուհետ՝ Մոնիթորինգի խորհուրդ) անմիջական վերահսկողության ներքո:

«ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի և Հիմնադրամի հետ կնքված պայմանագրի համաձայն 2016թ-ի ընթացքում իրականացվել է Սևանա լճի և ջրհավաք ավազանի գետերի համալիր հետազոտություններ: Վերցվել են լճի ջրի, հատակային նստվածքների նմուշներ նաև ցանցավանդակային տնտեսության գոտուց: Համաձայն անալիզների արդյունքների՝ Կարճաղբյուրի ձկնաբուծական տնտեսությունից հուրս հոսող ջրերի նմուշներում կայուն օրգանական աղտոտիչներ, պեստիցիդներ, բենզոլ, սնդիկ քանակապես չեն հայտնաբերվել: Տնտեսության գոտուց վերցված իշխանի տեսակի 8 և ավել ամսեկան ձկների առանձնյակների օրգանիզմում կայուն օրգանական աղտոտիչներ և սնդիկ քանակապես չեն հայտնաբերվել:

Համաձայն Մոնիթորինգի խորհրդի կողմից տրված՝



- ջրակենսաբանական ուսումնասիրությունների արդյունքների՝ Սևանա լճում որոշ ցուցանիշների փոփոխության առկայությունը, որը նկատելի է հիմնականում աշնանը, հնարավոր չէ վստահորեն կապել ցանցավանդակներին հարող տարածքներում օրգանական նյութի ավելացման հետ, քանի որ տարբեր տարիների ուսումնասիրությունների համեմատական վերլուծության արդյունքում՝ էվտրոֆացման պրոցեսների միտում նկատվում է լճի ողջ տարածքում, ինչը վկայում է Սևանա լճի խիստ անկայուն վիճակի մասին և արդյունք է՝ լճի ջրի մակարդակի փոփոխման:

- Սևանա լճի տրոֆիկ վիճակի գնահատման՝ /ըստ ֆոսֆորի արժեքների/ լճում կա բավարար քանակության սնուցող նյութեր: Ուսումնասիրված 6 դիտակետերից միայն երկուսի /7-րդ և 4-րդ/ հատակամերձ շերտերում է դիտվել ֆոսֆատ իոնի նորմից գերազանցում, ինչը հնարավոր չէ վստահորեն կապել ցանցավանդակային տնտեսության հետ /համեմատական վերլուծության համար անհրաժեշտ տվյալների բացակայության պատճառով/:

Ներկայումս ջրի որակի մոնիթորինգային աշխատանքները շարունակվում են, սեզոնային տվյալների բավարար ծավալի առկայության դեպքում հնարավոր կլինի ավելի ճշգրիտ գնահատել ցանցավանդակային տնտեսության ազդեցությունը Սևանա լճի ջրի որակի վրա:


Փոքր Սևանի այն հատվածը, որտեղ նախատեսվում է մոնտաժել նոր մոդելային ցանցավանդակային տնտեսությունը (Բերդկունք համայնքին հարող տարածք) գտնվում է «Սևան» ԱՊ տնտեսական գոտում: Ձկնաբուծական տնտեսության կազմակերպման համար տարածքն ընտրելիս հաշվի են առնվել մի շարք գործոններ՝ քամիներից պաշտպանվածություն, ջրի փոխանակում, խորություն և այլն: Հիմնվող տնտեսությունը տեղակայվելու է ավից մոտ 100մ հեռավորության վրա, որտեղ ջրի խորությունը կազմում է 30-35մ: Այդ հատվածում իրականացված հետազոտությունների արդյունքում ՋՇԴ առաջնային և երկրորդային ցանկի /ընդհանուր թվով 41/ օրգանական աղտոտիչներ չեն հայտնաբերվել: Նստվածքային նմուշներում ծանր մետաղները չեն գերազանցել սահմանային թույլատրելի արժեքները: (համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՇՄՆՄԿ) կողմից տրամադրված տվյալների):

Ներկայացված նախագծով նախատեսվում է մոնտաժել իրարից որոշակի հեռավորության վրա գտնվող 2 տնտեսություններ (ընդամենը 24 ցանցավանդակ), համաձայն հաշվարկների յուրաքանչյուր վանդակում պետք է աճեցվի մոտ 55 տոննա ձուկ:

Առաջին ցանցավանդակային տնտեսության հիմնման աշխատանքները նախատեսվում է սկսել 2017 թվականին: Սևանա լճի և շրջակա տարածքների վրա ազդեցության մշտական գնահատման և վերահսկողության պայմաններում՝ մոնիթորինգի խորհրդի կողմից տրված թույլտվության դեպքում կմոնտաժվի երկրորդ տնտեսությունը:

Տնտեսության համար նախատեսված ցանցավանդակները ներկրվելու են Դանիայից և դրանց հավաքման աշխատանքներն իրականացվելու են արտադրող կազմակերպության ներկայացուցիչների կողմից: Ցանցավանդակների հավաքման աշխատանքները նախատեսվում են իրականացնել «Սևան Ակվա» ՓԲ ընկերությանը պատկանող՝ Կարճաղբյուր համայնքի այն տարածքում, որտեղ հավաքվել են մոդելային ձկնաբուծական տնտեսության մյուս ցանցավանդակները: (Նշված աշխատանքների իրականացման համար Կարճաղբյուր համայնքին հարակից՝ 0.6 հա մակերեսով հողատարածքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացվել է տարածք):

Պատրաստի ցանցավանդակները ջրում կախված վիճակում՝ նավով տեղափոխվելու են գործունեության համար ընտրված՝ նոր ցանցավանդակային տնտեսության ջրային տարածք: Այնուհետև, լճում իրականացվելու են ցանցավանդակների խարսխման և մոնտաժման



աշխատանքները: Խարիսխներն իրենցից ներկայացնում են 1 տոննա քաշով երկաթյա ծանրոցներ, որոնք իջեցվում են լճի հատակ և դրանցից՝ Արքիմեդյան ուժի շնորհիվ կապվում են դեպի վեր մղվող ցանցավանդակները կրող խողովակները:

Նոր ցանցավանդակային տնտեսության հիմնման և աշխատանքների իրականացման համար Սևանա լճի ափամերձ հատվածում (<< Գեղարքունիքի մարզի Բերդկունք և Լճափ համայնքներին հարակից տարածքներ) նախատեսվում է վարձակալել «Սևան» ԱՊ-ին պատկանող, Երևան-Վարդենիս գլխավոր ավտոմայրուղուն հարակից՝ Չհա ընդհանուր մակերեսով հողատարձք, որտեղ պետք է տեղադրվեն ժամանակավոր տնակներ՝ պահակակետ և պահեստ ծառայելու համար: Այդ տարածքին հարակից ափում պետք է լինի կառամատույց: Կառամատույցն իրենցից ներկայացնում է նավի/նավերի կառանման համար նախատեսված գոտի, որտեղ ափին առկա են ամուր սյուներ, իսկ լճի այդ ափամերձ հատվածն ունի ալիքապաշտպան շերտ: Տարածքի ռելիեֆի շնորհիվ առկա է բնական հողաշերտ: Մոտ 10մ երկարությամբ և 2մ լայնությամբ, ջրից 60-100 սմ բարձրությամբ շերտի ավելացմամբ հնարավոր կլինի ստանալ պահանջվող ալիքապաշտպան շերտը: Շերտի երկարացման նպատակով որպես լիցք արվող քարեր կօգտագործվեն լճի նստվածքային ժայռաապարները, որոնք առկա են Սևանա լճի ափամերձ տարածքում:

Ցանցավանդակային տնտեսության հիմնական օղակներն են՝ լողացող վանդակները, ցանցերը, խարսխման և կառանման համակարգերը, մոնիթորինգի սարքավորումները, ձկների ավտոմատ կերակրման սարքավորումներ ինչպես նաև այլ օժանդակ սարքավորումներ:

Հաշվի առնելով Սևանա լճի եղանակային պայմաններն ու աշխարհագրական դիրքը՝ Ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարձր խտությամբ պոլիէթիլենից պատրաստված լողացող ցանցավանդակներ՝ բաղկացած 3 մակերեսային օղակներից և 1 բռնածողից, ինչը թույլ է տալիս ցանցավանդակն ավելի ամուր և հաստատուն պահել ջրի վրա, ապահովելով կայունություն՝ քամու և ավելոծությունների ժամանակ:

Պարանները կամ կառանման համակարգը (ճոպանները) միացնում են ցանցավանդակը խարսխման համակարգին: Կառանման համակարգը պետք է լինի բավականին ուժեղ, որ դիմակայի հնարավոր հոսանքների, քամու, սառույցի ու ալիքների ազդեցությանը՝ առանց տեղաշարժվելու կամ խախտվելու: Խարսխման համակարգը օգտագործվում է ցանցավանդակը պահելու համար: Մոնիթորինգային սարքավորումներն օգտագործվում են ջրի ջերմաստիճանի, թթվայնության, թթվածնի պարունակության, արտանետումների, ձկների աճի վերահսկման համար: Նախագծով նախատեսվում է նաև ավտոմատ կերակրման և այլ սարքավորումների կիրառումը:

Համաձայն ցանցավանդակային ձկնաբուծական ընդունված տեխնոլոգիայի՝ ցանցավանդակ տեղափոխվող մանրածկան կշիռը միջինը կկազմի՝ 15 գրամ: Առաջին 7 ամիսների ընթացքում ձկները կաճեն ամսական՝ միջինը 60%-ով՝ 15 գրամից հասնելով մինչև 300-350 գրամ, իսկ հաջորդ 12 ամսում՝ ամսական միջինը մոտ 15%-ով՝ հասնելով 1500-1700 գրամի: 1մ³-ում տարեկան աճեցվող ձկան կշիռը նախատեսվում է առավելագույնը 8 կգ: Ձկների կենսունակության գործակիցը կկազմի՝ 0.994, աճի գործակիցը՝ 1-1.6, իսկ կերի յուրացման գործակիցը (Food conversion rate (FCR))՝ 0.7-1.1: Ցանցավանդակներում տարեկան կտրվածքով կլցվի ավելի քան 4.000.000 հատ իշխանի (գեղարքունի և ամառային ենթատեսակներ) մանրածուկ: Ձկները կկերակրվեն արտասահմանայան լավագույն արտադրողների կողմից առաջարկվող էկոլոգիապես կայուն օրգանական կերով, որը սերտիֆիկացված է, սննդային հավելումներ, կոնսերվանտներ, հակաբիոտիկներ և այլ վտանգավոր, կամ վնասակար նյութեր չի պարունակում: Կերի բաղադրությունը կազմում են՝ բացառապես բնական մշակաբույսերը, ձկան ալյուրը և ձկան յուղը: Ցանցավանդակային տնտեսությունում նախատեսվում է նաև փորձարկել բնական կերով (գամարուս և օլիգոխետ) կերակրման հնարավորությունները և արդյունավետությունը: Գամարուսների աճեցումը նախատեսվում է պատվիրել շրջակա



համայնքների գյուղացիական տնտեսություններին, որը որոշակի պարբերականությամբ կմթերվի ցանցավանդակային տնտեսության կողմից:

2017թ. հունիսին կամփոփվեն նախորդ տարի տեղադրած ցանցավանդակների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիթորինգի արդյունքները, ինչի հիման վրա Հոգաբարձուների խորհուրդը կսահմանի հաջորդ տարվա համար տրվող ցանցավանդակային ձկնաբուծության թույլտվությունների քանակը:

Մոդելային ցանցավանդակային տնտեսության կազմակերպումը և հետագա շահագործումը որոշակի ազդեցություն կարող է ունենալ Սևանա լճի էկոհամակարգի վրա: Բացասական ազդեցությունները հիմնականում կապված են կերերի ներմուծման և ձկների կենսաապահովման հետ և ներառում են.

➤ Ձկների հիվանդությունների և մակաբույծների ինկուբացում և փոխանցում տնտեսություններում աճեցված ձկներից՝ ձկների վայրի հանրույթին:

➤ Ցանցավանդակային տնտեսություններից առաջացած օրգանական աղտոտում:

➤ Գենետիկորեն տարբերվող ձկների փախուստ ցանցավանդակային տնտեսություններից և նրանց խաչասերում վայրի ձկների հետ:

➤ Ցանցավանդակները որպես ֆիզիկական վտանգ կամ պատնեշ այլ կենդանիների համար:

➤ Ցանցավանդակների բուսած:

➤ Տնտեսություններում ձկան զանգվածային մահացում և հեռացում:


➤ Տնտեսությունների գործունեությունից առաջացած թափոններ:

Թվարկված ազդեցությունների համար հայտում առաջարկվել են կանխարգելիչ, կամ մեղմացնող միջոցառումներ:

Հնարավոր ռիսկերը կապված են նաև բուծվող ձկնատեսակների, օգտագործվող կերի և բուժանյութերի վերահսկողության հետ: Համալիր ծրագրի շրջանակներում բուծվող տեսակների հսկողությունն իրականացնելու նպատակով Սևանա լճի ավազանում պետական և մասնավոր համագործակցությամբ ստեղծվել է մանրածկան տնտեսություն, որն էլ հանդիսանում է ձկնաբուծարանների միակ մատակարարը: Ձկան արտադրության ողջ շղթայի համար կերի և բուժանյութերի ներմուծումն ու մատակարարումն ապահովվում է կենտրոնացված ձևով՝ ապահովելով միևնույն բարձրորակ կերի և բուժանյութերի խիստ վերահսկելի օգտագործումը: Օգտագործվող կերի վերահսկողության նպատակով Համալիր ծրագրի շրջանակներում իրականացվում են յուրաքանչյուր նոր խմբաքանակի լաբորատոր հետազոտություններ՝ ՀՀ առաջատար լաբորատորիաներում:

Ցանցավանդակային ձկնաբուծության գործունեությունից առաջացող թափոնները կարող են լինել օրգանական և անօրգանական բնույթի: Ազոտի և ֆոսֆորի լուծված անօրգանական տեսակներն (ամոնիում իոն, ֆոսֆատ իոն) առաջանում են ձկների արտաթորանքից և կարող են յուրացվել ջրիմուռների կողմից: Անօրգանական ածխածինը, որը ձկների շնչառության հետևանք է, կարող է հեռանալ էկոհամակարգից: Արտաթորանքի և ջուրացված ձկնակերի քայքայման ընթացքում մասնիկների տեսքով առաջացող օրգանական ազոտի, ֆոսֆորի և ածխածնի լուծման արդյունքում առաջացող տեսակներն օգտագործվում են բակտերիաների և ջրիմուռների կողմից (Stoecker և Gustafson, 2003) (Olsen և Olsen, 2008): Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ արտադրված ձկան ամեն տոննայի դիմաց շրջակա միջավայր է արտանետվում 132 կգ ազոտ և 25 կգ ֆոսֆոր (Islam, 2005): Կուտակումները նվազագույնի հասացնելու համար փաստաթղթում առաջարկվել են լուծումներ և համապատասխան միջոցառումներ:

Ցանցավանդակային տնտեսությունից օրգանական նյութերի արտանետումների որոշման և շրջակա միջավայրի վրա ազդեցությունների կանխարգելմանն ուղղված ցանցավանդակների տարածքում կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.



- Ջրային շերտում օրգանական և անօրգանական ածխածնի, ազոտի և ֆոսֆորի միացությունների պարբերաբար չափումներ,

- Լճի հատակի (ցանցավանդակների տակ) օրգանական նյութի և ֆոսֆորի լաբորատոր հետազոտություններ:

- Ձևավորվել է մոնիթորինգայի խորհուրդ (որում ընդգրկվել են շահագրգիռ կառույցների փորձագետներ և ոլորտի պատասխանատու անձինք), որի կողմից իրականացվում և վերահսկում են մոնիթորինգային հետազոտություններ, վերլուծվում տնտեսություններից ստացված տվյալները, գնահատվում Սևանա լճի էկոհամակարգի վրա ծրագրի ազդեցությունը:

- Լճում ցանցավանդակների թվի և ձևան արտադրության ծավալների աստիճանաբար ավելացում՝ մոնիթորինգի խորհրդի եզրակացության համաձայն, ինչը հնարավորություն կտա վերահսկել հնարավոր արտանետումները և ձեռնարկել արտանետումները նվազեցնող համապատասխան միջոցառումներ:

- Արտադրվող ձկան ծավալների ընդլայնում բացառապես միջազգային էկոլոգիական ստանդարտներին համապատասխան, այդ թվում՝ 1մ3 տարածքում բուծել առավելագույնը 8 կգ ձուկ, ինչը մոտ 5 անգամ քիչ է ցանցավանդակային ձկնաբուծության միջին արտադրողականությունից:

- Ցանցավանդակային տնտեսությունների կառուցում և շահագործում միջազգային փորձի անընդհատ ուսումնասիրման և բարձրակարգ տեխնոլոգիաների կիրառության պայմաններում:

- Աշխարհ լավագույն արտադրողների կողմից առաջարկվող էկոլոգիապես կայուն կերի օգտագործում, որի բաղադրությունը կազմված է բացառապես բնական գյուղատնտեսական մշակաբույսերից, ձկան այլուրից և ձկան յուղից:

- Կերակրման նորմաների և կերակրման գործընթացների վերահսկման օպտիմալացում՝ առավելագույնի հասցնելով ցանցավանդակի ձկների բնական կերով (գամարուսներ) կերակրման հնարավորություններ:

- Ցանցավանդակային տնտեսությունից ստացվող շահույթի մի մասը և հիմնադրամին վճարվող մյուս գումարներն ուղղել բնապահպանական միջոցառումների իրականացմանը, (այդ թվում՝ հիմնադրամին վճարել իրացված ձկան յուրաքանչյուր կիլոգրամի համար 200 դրամ և տարեկան հասույթի հասույթի 1.5 %-ը, Սևանի իշխանի մանրածուխ բաց թողնել Սևանա լիճ):

- Ցանցավանդակներում կոլեկտորների տեղադրում, որոնք կհավաքեն ձկների կոշտ արտաթորանքը և սատկած ձկներին ու պարբերաբար կմաքրվեն պոմպերի միջոցով:

- Անհրաժեշտության դեպքում ցանցավանդակների տակ տեղադրել թթվածին մղող սարքավորումներ, ինչը կնպաստի օրգանական նյութի քայքայմանը:

Ծրագրի իրականացումից ակնկալվող տնտեսական, սոցիալական և բնապահպանական արդյունքներն են.

- Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման նպատակով յուրաքանչյուր տարի շուրջ 1 մլն մանրածուխ բաց թողում Սևանա լիճ և հիմնական ձվադրավայր հանդիսացող գետեր:

- Դրամական միջոցների ձևավորում և ուղղում Սևանա լճի ավազանի խնդիրների լուծմանը: Այս միջոցները կձևավորվեն մանրածուխ արտադրության, ձկան վերամշակման և իրացման ոլորտներում ձևավորված շահույթներից, ինչպես նաև ցանցավանդակային տնտեսությունների տարեկան հասույթից և յուրաքանչյուր մեկ կիլոգրամ ձուկ արտադրելու համար մասհանումներից:

- Սևանի իշխանի արտադրության ոլորտում 2000-2500, իսկ ընդհանուր արժեզրթայում՝ 4000-5000 աշխատատեղի ստեղծում:

- Սևանի իշխանի արտադրություն, վերամշակում և արտադրանքի մոտ 85%-ի արտահանում:



- Տարեկան 10 000 տ և ավելի ձկան արտադրության պարագայում կատեղծվեն ձկան կերի արտադրության լուրջ նախադրյալներ Հայաստանում, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա խթանելու պայմանագրային բուսաբուծությունը, քանի որ ձկան կերի բաղադրության 50-70%-ը տարբեր գյուղատնտեսական մշակաբույսեր են:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 07.06.2017թ Բերդկունք համայնքում անցկացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում մասնակիցները տվել են իրենց հավանությունը նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ: Փորձաքննության գործընթացում հայտը լրակազմվել և լրամշակվել է, հաշվի են առնվել նաև ՀՀ ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի»», ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումների, ինչպես նաև «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարծիքները և առաջարկությունները, որոնց հիման վրա նախագծում արվել են համապատասխան փոփոխություններ:

Եզրահանգում: Գործունեության իրականացման ընթացքում էկոլոգիական իրավիճակի պարբերաբար մոնիթորինգը, որը ուղեկից կլինի ողջ գործունեության ընթացքում, հնարավորություն կտա Սևանա լճի և շրջակա միջավայրի վրա ցանցավանդակային տնտեսությունների ունեցած ազդեցությունները պահել մշտական գնահատման պայմաններում՝ Սևանա լճում անցանկալի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական փոփոխություններից խուսափելու համար, ինչպես նաև հիմք կհանդիսանա գործունեության պետական բնապահպանական վերահսկողության հանար: Համալիր ծրագրով նախատեսված Մոնիթորինգի խորհրդի կողմից որոշումները կկայացվեն կոլեգիալ, եզրակացությունները կտրվեն գիտական և մասնագիտական անկախության սկզբունքով: Մոնիթորինգի խորհուրդը կհանդիսանա նաև հիմնական հարթակ՝ շահագրգիռ կողմերի հետ ծրագրի խնդիրների քննարկման համար: Մոնիթորինգի արդյունքների հիման վրա Հոգաբարձուների խորհրդի կողմից կսասհմանի հաջորդ տարվա համար ցանցավանդակային ձկնաբուծության թույլտվությունների քանակը:

Փորձաքննական պահանջներ

- Սևանա լճում ձկնաբուծության նպատակով ցանցավանդակային տնտեսությունները հիմնելիս անհրաժեշտ է առաջնորդվել՝ ՀՀ կառավարության 2016 թվականի ապրիլի 21-ի «Սևանա լճում էկոհամակարգերի վերականգնման նպատակով տնտեսական գործունեություն իրականացնելու մասին» N 473-Ն որոշման և հավելվածի պահանջներով:

- Գործունեության իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել մոնիթորինգ /ներառելով՝ Սևանա լճի ասիմիլացիոն պոտենցիալի, հիդրոկենսաբանական, հիդրոքիմիական, էկոլոգիական ընթացիկ վիճակի, Սևանի իշխանի ցանցավանդակային ձկնաբուծության շրջակա միջավայրի վրա ազդեցության և այլ գնահատման աշխատանքների վերաբերյալ/, կազմել հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվություն, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:

- Սևանա լճի Բերդկունք համայնքին հարող հատվածում նախատեսված 12 ցանցավանդակից բաղկացած 2-րդ տնտեսությունն անհրաժեշտ է մոնտաժել միայն Մոնիթորինգի խորհրդի կողմից տրված դրական արդյունքների առկայության դեպքում՝ 1-ին ցանցավանդակային տնտեսության Սևանա լճի և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության մշտական գնահատման և վերահսկողության արդյունքում:

- Ցանցավանդակային տնտեսություններում աճեցնել բացառապես՝ Սևանի իշխանի Գեղարքունի և Ամառային իշխան ենթատեսակներ, որոնք իրենց գենոֆոնդով պետք է համապատասխանեն Սևանա լճում նախկինում բնակեցված պոպուլյացիաներին:



- Խիստ հսկողություն սահմանել օգտագործվող արհեստական կերերի որակական ցուցանիշների և բուժանյութերի նկատմամբ, Սևանա լճի էկոլոգիական անվտանգության համար պարբերաբար իրականացնել արհեստական կերերի ստուգումներ:

- Գործունեության շրջանակներում նախատեսվող շինություններն իրականացնել՝ ՀՀ կառավարության 2008թ դեկտեմբերի 18-ի՝ «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերում վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» N 1563-Ն որոշման պահանջների համաձայն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սևան Ակվա» ՓԲԸ կողմից ներկայացված ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանա լճի Բերդկունք համայնքին հարող հատվածում Սևանի իշխանի աճեցման ցանցավանդակային տնտեսության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ



Հ. Մկրտչյան